


«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՎՊՄԻ-ի ղեկավար, Բ.Գ.Պ., պրոֆեսոր
Գ.Կ. Խաչատրյան
“ 21 ” 05 2010թ.



Կարգ

«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության
մագիստրատուրայի 2010-2011 ուսումնական
տարվա ընդունելության

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում
(արձանագր. թիվ _5_ “_21_” _____05_____ 2010թ.)

ՎԱՆԱԶՈՐ 2010

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույնով սահմանվում է «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ Ինստիտուտ/ մագիստրատուրայի 2010-2011 ուսումնական տարվա ընդունելության կարգը /այսուհետ՝ կարգ/

1.2. Սույն կարգի իրավական հիմքն են ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին ՀՀ օրենքը», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ինստիտուտի կանոնադրությունը, ՀՀ ԿԳ նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», ինստիտուտի մագիստրատուրայի ժամանակավոր կանոնակարգը:

2. Ինստիտուտի մագիստրատուրայի մասնագիտությունները և տեղերը

2.1. Ինստիտուտի մագիստրատուրայի 2010-2011 ուսումնական տարվա ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների գծով.

031000 Հայոց լեզու և գրականություն Մանկավարժության մագիստրոս

010100 Մաթեմատիկա Մանկավարժության մագիստրոս

030400 Պատմություն Մանկավարժության մագիստրոս

051000 Մանկավարժություն և հոգեբանություն Մանկավարժության մագիստրոս

050100 Կրթության կազմակերպում Մանկավարժության մագիստրոս

010600 Ֆիզիկա Մանկավարժության մագիստրոս

020200 Կենսաբանություն Մանկավարժության մագիստրոս

032400 Ռուսաց լեզու և գրականություն Մանկավարժության մագիստրոս

031300 Օտար լեզու և գրականություն /անգլերեն/ Մանկավարժության մագիստրոս

2.2. Ինստիտուտի մագիստրատուրայի 2010-2011 ուսումնական տարվա ընդունելությունն իրականացվում է առկա ուսուցման համակարգում՝ անվճար և վճարովի հիմունքներով:

2.3. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ ընդունելության տեղերի ընդհանուր թիվը կազմում է 20, որից

- պարտադիր զինվորական ծառայության տարկետման իրավունքով պետպատվերով տեղերի թիվը -4
- առանց պարտադիր զինվորական ծառայության տարկետման իրավունքի պետպատվերով տեղերի թիվը -16

2.4. Ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայության տարկետման իրավունքի տեղերի թիվը կազմում է 110:

3. Մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովը

3.1. Մագիստրատուրայի ընդունելությունը կատարում է ռեկտորի նախագահությամբ հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորները, ուսումնական վարչության պետը, ֆակուլտետների ղեկավարները, մագիստրատուրայի հարցերով զբաղվող աշխատակիցները:

3.2. Ընդունելության համար հանձնաժողովն ուսումնասիրում և քննարկում է ֆակուլտետների ղեկավարների կողմից ներկայացված հավակնորդների ցուցակները և անցկացնում է մրցույթ՝ հաշվի առնելով ցուցակներում ընդգրկված հավակնորդների բազային կրթությունը: Հանձնաժողովի կատարած մրցույթի արդյունքներով ինստիտուտի ռեկտորը հրամանագրում է մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

4. Ինստիտուտի մագիստրատուրա ընդունվելու համար դիմելու ժամկետները և ներկայացվող փաստաթղթերը

4.1. Մագիստրատուրայի առաջին և երկրորդ փուլերով ընդունելությունից մեկ ամիս առաջ հանրապետական նշանակության որևէ թերթում տպագրվում է համապատասխան հայտարարություն:

4.2. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության համար գործերի ընդունումը կատարվում է մայիսի 22-ից մինչև հունիսի 3-ը,

երկրորդ փուլով՝ հուլիսի 1-ից մինչև հուլիսի 15-ը և օգոստոսի 15-ից մինչև օգոստոսի 20-ը:

4.3. Ինստիտուտի մագիստրատուրայի դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- դիմում-հայտ ՎՊՄԻ ՊՈԱԿ ռեկտորի անունով
- բարձրագույն կրթության մասին դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճենները
- երաշխավորագիր ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդից /ինստիտուտի նախորդ տարիների և այլ բուհերի ընթացիկ և նախորդ տարիների շրջանավարտները, պարտադիր ժամկետային զինծառայությունից զորացրվածներն այն չեն ներկայացնում/
- 4 լուսանկար /3x4 չափի/

5. Մագիստրատուրայի ընդունելության կարգը

5.1. Ինստիտուտի մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի և դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

5.2. Ինստիտուտի մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է երկու փուլով, մրցութային կարգով:

5.3. Առաջին փուլով, հայտարարված մասնագիտությամբ, կարող են դիմել տվյալ մասնագիտությամբ ինստիտուտի ընթացիկ ուսումնական տարվա այն շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքից և պետական քննություններից ստացել են «լավ» կամ «գերազանց» գնահատականներ, և որոնց դիպլոմի հավելվածում նշված բոլոր առարկաների քննական գնահատականների միջինը կազմում է

- «4» կամ ավելի միավոր՝ «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Օտար լեզու և գրականություն», «Պատմություն», «Կրթության կազմակերպում», «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտությունների համար
- «3.75» կամ ավելի միավոր՝ «Ֆիզիկա», «Մաթեմատիկա», «Կենսաբանություն» մասնագիտությունների համար,

և որոնց համապատասխան ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդը երաշխավորել է ուսումը շարունակելու մագիստրատուրայում:

5.4. Առաջին փուլով ուսուցման անվճար համակարգում մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով և առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ՀՀ կառավարության կողմից տրամադրած ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ տեղերի համար:

5.5. Առաջին փուլով ինստիտուտի մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննությունների և հարցազրույցների՝ ներկայացված փաստաթղթերի հիման վրա, բացառությամբ «Կրթության կազմակերպում» մասնագիտության:

«Կրթության կազմակերպում» մասնագիտության ընդունելությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերով և ընդունելության քննությունների ու հարցազրույցների արդյունքներով մրցույթի հիման վրա:

5.6. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացնելիս հաշվի են առնվում առաջնահերթության հետևյալ չափանիշները.

5.6.1. նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականը, կամ միջին որակական գնահատականը / հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ընթացքում ակադեմիական պարտք չունեցած շրջանավարտներին/:

5.6.2. մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականը կամ միջին որակական գնահատականը /հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ընթացքում ակադեմիական պարտք չունեցած շրջանավարտներին/:

5.6.3. հրատարակված գիտական աշխատությունները /հոդվածներ, զեկուցումների դրույթներ/:

5.6.4. ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականը կամ միջին որակական գնահատականը /հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ընթացքում ակադեմիական պարտք չունեցած շրջանավարտներին/:

5.7. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է հունիսի 5-ից մինչև հունիսի 10-ը:

5.8. Հունիսի 10-ից մինչև սեպտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում հրամանագրված, բայց նրանց դասերի չհաճախելու պատճառով (տարբեր պատճառներով) թափուր մնացած անվճար և վճարովի ուսուցման համակարգի տեղերը մեխանիկորեն համալրվում են տվյալներով անմիջապես հաջորդը համարվող և սույն կարգի 5.3 կետի պահանջները բավարարող շրջանավարտներով՝ վերջիններիս դիմումների հիման վրա:

5.9. Երկրորդ փուլով, հայտարարված մասնագիտություններով ուսուցման վճարովի համակարգում սովորելու համար /առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի/, կարող են դիմել սույն կանոնակարգի 5.3 կետի պահանջները բավարարող ինստիտուտի այլ մասնագիտությունների և այլ բուհերի ընթացիկ ուստարվա շրջանավարտները /բակալավրեր և դիպլոմավորված մասնագետներ/:

5.10. Երկրորդ փուլով մագիստրատուրա ընդունվելու համար կարող են դիմել նաև ինստիտուտի նախորդ տարիների (այդ թվում նաև պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված) այն շրջանավարտները, որոնց դիպլոմի հավելվածում նշված առարկաների քննական գնահատականների միջինը 3.5-ից ցածր չէ:

5.11. Երկրորդ փուլով նույն մասնագիտությամբ մագիստրատուրայի ընդունելության քննությունը կատարվում է բակալավրիատի կրթական ծրագրերի մասնագիտական ավարտական առարկաների քննական հարցաշարերի շրջանակներում :

5.12. Այլ մասնագիտություն ունեցող բակալավրիատի շրջանավարտների և դիպլոմավորված մասնագետների համար կազմակերպվում են ընդունելության քննություններ մագիստրատուրայի մասնագիտացման առարկայից՝ բակալավրիատի կրթական ծրագրի ծավալի սահմաններում:

5.13. Այլ մասնագիտություն ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է նույն մասնագիտությամբ առաջին և երկրորդ փուլերով ընդունելության անցկացումից հետո թափուր մնացած վճարովի տեղերի հաշվին՝ ըստ սույն կարգի 5.5 կետում շարադրված պայմանների:

5.14. Երկրորդ փուլով ուսուցման վճարովի համակարգ /առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի/ ընդունելությունը կատարվում է ընթացիկ տարվա օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 5-ը:

6. Մագիստրատուրայի ընդունելության մրցութային կարգը.

6.1. Առաջին փուլով ընդունելությունը կատարվում է ներկայացրած փաստաթղթերի և դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին միավորի կամ միջին որակական գնահատականի հիման վրա՝ ընդունող հանձնաժողովի կայացրած որոշմամբ: Հավասար

միջին միավորի կամ միջին որակական գնահատականի դեպքում հերթականությամբ հաշվի են առնվում սույն կարգի 5.6 կետի ենթակետերում նշված բոլոր լրացուցիչ չափանիշները:

6.2. Մագիստրատուրայի երկրորդ փուլով ընդունելությունը կատարվում է ընդունելության քննությունների արդյունքներով՝ մրցութային հիմունքներով հանձնաժողովի որոշմամբ:

6.3. Մագիստրատուրայի վճարովի համակարգում ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնած ուսանողների հրամանագրումը կատարվում է քննություններից հետո՝ 10 օրվա ընթացքում ուսման վարձը վճարելու պայմանով:

7. Մագիստրատուրայի դասերի սկիզբը

7.1. Մագիստրատուրայի առաջին կուրսի դասերը սկսվում են սեպտեմբերի 6-ից: